# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2022թ. N 353-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՆԿՈՒՂԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԼՈՂԱՎԱԶԱՆԸ, ԾԱԾԿԱՐԱՆԸ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-12-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հաշվի առնելով «Հարշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հուլիսի 12-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0099 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տված 2016 թվականի սեպտեմբերի 08-ի N Հ-7751 արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, չափագրման հատակագծերն ու Վրեժ Սերյոժայի Բեգլարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի 8-րդ զանգվածի թիվ 2 հասցեի անշարժ գույքը վերահասցեավորել՝ Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Սևան թաղամաս 8-րդ փողոց 2:

2.Ճանաչել Վրեժ Սերյոժայի Բեգլարյանի սեփականության իրավունքը ըստ օրենքի ժառանգության իրավունքով իրեն պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0162-0003) փաստացի ավել օգտագործվող 0.0099 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3.Վրեժ Սերյոժայի Բեգլարյանին պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Սևան թաղամաս 8-րդ փողոց 2 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0162-0003, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022TBABDK) 0.0599 հեկտար մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 66.9 քմ արտաքին մակերեսով նկուղը, 10.0 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 15.4 քմ արտաքին մակերեսով լողավազանը, 37.53 մակերեսով ծածկարանը, 2.5 քմ արտաքին մակերեսով սանհանգույցը և 2.4 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

4.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.0599 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. օգոստոսի 08
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2022թ. N 354-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի ԹԻՎ 128 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Արմինե Սարգիսի Մուրադյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի քաղաքապետարանի 1997 թվականի օգոստոսի 20-ի թիվ 128 որոշման «գ» ենթակետում «Սարգսի» բառը փոխարինել «Սարգիսի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ                Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. օգոստոսի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2022թ. N 355-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 32 ՇԵՆՔ 33 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Արմինե Սարգիսի Մուրադյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արմինե Սարգիսի Մուրադյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 32 շենք 33 բնակարանի (վկայական 0296371, տրված՝ 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 32 շենք 33 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. օգոստոսի 08
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2022թ. N 356-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տված արխիվային տեղեկանքն ու Օնիկ Արամի Ռաթևոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Արզնիի այգետարածքի 6-րդ զանգվածի 9/1 անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 07-055-0215-0013) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Ջրաբեր 6-րդ զանգված 1:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ                Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. օգոստոսի 08
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2022թ. N 357-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ու Մարիաննա Վիկտորի Աբովյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ Նուռնուս այգետարածքի թիվ 2ա անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0132-0019) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամաս 1-ին փողոց 2/1:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. օգոստոսի 08
ք. Բյուրեղավան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

08 օգոստոսի 2022թ. N 358-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 01-Ի N 338-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Նարեկ Վոլոդյայի Մխոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 01-ի «Անշարժ գույքի առանձնացվող մասերին հասցեներ տրամադրելու և հատակագծերը հաստատելու մասին» N 338-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «0,00161» թիվը փոփոխել «0,0161» թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. օգոստոսի 08
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2022թ. N 359-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տված արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր ու Սոնյա Միրաքյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1.Աբովյանի շրջանի Նուռնուս այգետարածքի 12 տեղամասի 9 անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0145-0022) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 11-րդ փողոց 9:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2022թ. օգոստոսի 08
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

09 օգոստոսի 2022թ. N 360-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 16-րդ 1-ին մասի, 18-րդ հոդվածի 1-ին և 2.1-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած տեղական ինքնակառավարման մարմինների 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 10-րդ և 11-րդ կետերի՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների՝ 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների անցկացման համար Բյուրեղավան համայնքում կազմավորել տեղամասեր և սահմանել 6 (վեց) տեղամասային կենտրոններ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանին սահմանված ժամկետում տեղամասային կենտրոնների մասին տեղեկացնել լիազոր մարմնին ու տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին և

ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել տեղամասային կենտրոնների ցանկը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 09
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

09 օգոստոսի 2022թ. N 361-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած տեղական ինքնակառավարման մարմինների 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 18-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների՝ 2022 թվականի սեպտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների վերաբերյալ համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1)քաղաք Բյուրեղավան, Կոտայքի փողոց, 28 շենքի ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

2)քաղաք Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց, 42 շենքի ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

3)քաղաք Բյուրեղավան, Սամվել Վարդանյան փողոց, 36 շենքի ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

4)քաղաք Բյուրեղավան, Վազգեն Սարգսյան փողոց, 20 շենքի ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

5)գյուղ Նուռնուս, Գլխավոր փողոց թիվ 13 շինության ճակատային մաս՝ 20 (քսան) քառակուսի մետր.

6)գյուղ Նուռնուս, Գլխավոր փողոց թիվ 27 շինության կողային հատված՝ 6 (վեց) քառակուսի մետր.

7)գյուղ Ջրաբեր, 1-ին փողոց, հուշարձանի կողքի քարե կառույցի վրա՝ 2 (երկու) քառակուսի մետր.

8)գյուղ Ջրաբեր, 1-ին փողոց 32 տան ճակատային մաս՝ 2 (երկու) քառակուսի մետր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2022թ. N 362-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԸ, ՀԱՐԹԱԿԸ, ԾԱԾԿՆ ՈՒ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հաշվի առնելով «Հարշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հուլիսի 28-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցված են 2014-2021 թվականներին, հիմք ընդունելով չափագրման հատակագծերն ու Ռինա Շափաղաթի Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ Նուռնուս այգեգործական զանգված թիվ 10 այգեգործական հողամասի և այգետնակի հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 3-րդ փողոց 10:

2. Ռինա Շափաղաթի Պետրոսյանին պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 3-րդ փողոց 10 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0135-0010, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022RX4V2P) 0.049 հեկտար մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 11.9 քմ արտաքին մակերեսով այգետնակը, 5.8 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 5.0 քմ արտաքին մակերեսով սանհանգույցը, 1.8 քմ մակերեսով հարթակը, 5.0 քմ մակերեսով ծածկը և 5.9 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Ռինա Շափաղաթի Պետրոսյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 40280 (քառասուն հազար երկու հարյուր ութսուն) դրամ՝ ինքնակամ շինությունների օրինականացման վճար:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 09
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

10 օգոստոսի 2022թ. N 363-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 311-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Լամարա Ռուբենի Բարսեղյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 14-ի «Անշարժ գույքը վերահասցեավորելու, փաստացի ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, ինքնակամ կառուցված բնակելի տունը, օժանդակ շինությունը, ջրավազանը, աստիճանը, զուգարանը, ծածկն ու պարիսպն օրինական ճանաչելու և հատակագիծը հաստատելու մասին» N 311-Ա որոշման նախաբանում և 2-րդ կետում «0.05» թիվը փոխարինել «0.049» թվով, իսկ «0.0088» թիվը՝ «0.0098» թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 10
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 օգոստոսի 2022թ. N 364-Ա

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ԹԱՄԱՐԱ ԵՎ ԷՄԻԼՅԱ ՅԱՅԼՈՅԱՆՆԵՐԻ ՀՈՐ՝ ՀՐԱՅՐ ՅԱՅԼՈՅԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԻՐ ԲԱԺՆԵՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 31-ի N 34-Ա որոշմամբ հաստատված Բյուրեղավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատակարգի և հիմք ընդունելով Հրայր Արշակի Յայլոյանի դիմումը և այն հանգամանքը, որ անչափահասներ՝ Թամարա և Էմիլյա Հրայրի Յայլոյանները չեն օգտվում գնելու նախապատվությունից և չեն առարկում, որպեսզի իրենց հայրը՝ Հրայր Յայլոյանը, բնակարանի իր բաժնեմասը վաճառի իրենց պապիկին՝ Արշակ Հրաչի Յայլոյանին, և Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 8-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1.Թույլատրել Հրայր Արշակի Յայլոյանին (ծնված՝ 1983 թվականի դեկտեմբերի 10-ին, նույնականացման քարտ՝ 013187273, տրված՝ 2022 թվականի հուլիսի 03-ին 059-ի կողմից) վաճառել իր անչափահաս երեխաներ՝ Թամարա Հրայրի Յայլոյանին (ծնված՝ 2006 թվականի նոյեմբերի 30-ին, ծննդյան վկայական՝ ԱԱ N141954, տրված՝ 2006 թվականի դեկտեմբերի 04-ին) և Էմիլյա Հրայրի Յայլոյանին (ծնված՝ 2009 թվականի հուլիսի 31-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ N 005692, տրված՝ 2009 թվականի օգոստոսի 03-ին) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան, քաղաք

Բյուրեղավան, Օղակաձև փողոց, 51 շենք 1 բնակարանի (վկայական N 16092016-07-0072) իր բաժնեմասը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրայր Արշակի Յայլոյանին և Անահիտ Վոլոդիայի Ստեփանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 10
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022թ. N 365-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 31 ՇԵՆՔԻ ԹԻՎ 47 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Սվետլանա Ավետիսի Թեյյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սվետլանա Ավետիսի Թեյյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 31 շենքի թիվ 47 բնակարանի (վկայական 0296627, տրված՝ 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 31 շենք 47 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 11
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022թ. N 366-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 33-րդ, 50-րդ ու 51-րդ կետերի և հիմք ընդունելով Նունե Միքայելի Բեգլարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Նունե Միքայելի Բեգլարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Հրաչիկ Հարոյան պողոտա թիվ 59 (վկայական N 22042015-07-0011, կադաստրային ծածկագիր՝ 07-003-0047-0007) անշարժ գույքի առանձնացվող հատվածներին տրամադրել հասցեներ՝

1) 0.0260 հա մակերեսով առանձնացվող հատված 1-ին՝
Հայաստանի Հանրապետություն Կոտայք մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 3/1.
2) 0.0640 հա մակերեսով առանձնացվող հատված 2-ին՝
Հայաստանի Հանրապետություն Կոտայք մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 3/2:

2.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող՝ անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի տված հատակագծերը:

3.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեների գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 11
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2022թ. N 367-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 33-րդ, 50-րդ ու 51-րդ կետերի և հիմք ընդունելով Նայիրա Ալեքսեյի Յունանովայի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Նայիրա Ալեքսեյի Յունանովային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1 փողոց 18/1 հասցեի (սեփականության վկայական N 21042016-07-0049, կադաստրային ծածկագիր՝ 07-003-0035-0013) անշարժ գույքի առանձնացվող հատվածներին տրամադրել հասցեներ՝

1) 0.07592 հա մակերեսով առանձնացվող հատված 1-ին՝
Հայաստանի Հանրապետություն Կոտայք մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1-ին փողոց 18/1,
2) 0.01788 հա մակերեսով առանձնացվող հատված 2-ին՝
Հայաստանի Հանրապետություն Կոտայք մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1-ին փողոց 18/2:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեների գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 11
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2022թ. N 368-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2022 թվականի օգոստոսի 10-ի N01/12/04678-2022 գրությունը, հաստատված հատակագիծն ու Սերգեյ Սամվելի Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Սերգեյ Սամվելի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 30/70 (սեփականության վկայական՝ N 16062022-07-0101, կադաստրային ծածկագիր՝ 07-003-0037-0180) հասցեի 0.0048 հեկտար բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի նշանակության, հասարակական կառուցապատման հողամասի՝ համաձայն հաստատված հատակագծի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 11
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2022թ. N 369-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 32 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Ռեգինա Բենյամինովա Վարդանայի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի քաղաքապետարանի 1997 թվականի մայիսի 19-ի «Բնակարանը սեփականաշնորհելու մասին» թիվ 32 որոշման 4-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) «բ» ենթակետում «Չիլինգարյան Ռեգինե Բենիամինի» բառերը փոխարինել «Վարդանա Ռեգինա Բենյամինովա» բառերով,
2) «գ» ենթակետում « Լիլիա » բառը փոխարինել «Լիլյա» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 օգոստոսի 2022թ. N 370-Ա

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետի և հիմք ընդունելով Հարություն Նորիկի Բալասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հարություն Նորիկի Բալասյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության 6.0089 հեկտար մակերեսով այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ բազմամյա տնկարկների (կորիզավոր):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2022թ. N 371-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 09-Ի N 362-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարատ Պետրոսյանի զեկուցագիրը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 09-ի «Անշարժ գույքը վերահասցեավորելու, ինքնակամ կառուցված այգետնակը, օժանդակ շինությունը, սանհանգույցը, հարթակը, ծածկն ու պարիսպն օրինական ճանաչելու մասին» N 362-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անշարժ գույքը վերահասցեավորելու, ինքնակամ կառուցված այգետնակը, օժանդակ շինությունն ու ծածկն օրինական ճանաչելու մասին».

2) որոշման նախաբանում «2014-2021» թվերը փոխարինել «2014-2018» թվերով.

3) որոշման 2-րդ կետից հանել «5.0 քմ արտաքին մակերեսով սանհանգույցը, 1.8 քմ մակերեսով հարթակը,» և «և 5.9 քմ մակերեսով պարիսպը» բառերը և թվերը.

4)որոշման 3-րդ կետում «40280 (քառասուն հազար երկու հարյուր ութսուն)» բառերն ու թվերը փոխարինել «29440 (քսանինն հազար չորս հարյուր քառասուն)» բառերով ու թվերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. օգոստոսի 12
ք. Բյուրեղավան

Հավելված
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2022 թվականի օգոստոսի 09-ի N 360–Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

| Հ/Հ | Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը | Հասցեն | Ընտրող-ների թիվը |
|---|---|---|---|
| 1. | «Բյուրեղավանի Ս. Վարդանյանի անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն | քաղաք Բյուրեղավան, Կոտայքի փողոց 63 | 1876 |
| 2. | Մշակույթի տուն | քաղաք Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց | 1911 |
| 3. | «Բյուրեղավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն | քաղաք Բյուրեղավան, Սամվել Վարդանյան փողոց 2 | 1793 |
| 4. | «Բյուրեղավանի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն | քաղաք Բյուրեղավան, Սամվել Վարդանյան փողոց 47/55 | 1863 |
| 5. | «Նուռնուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն | Գյուղ Նուռնուս, Գլխավոր փողոց 9 | 506 |
| 6. | «Ջրաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն | Գյուղ Ջրաբեր, 1-ին փողոց շենք 24 | 306 |

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՎ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԽՄԲԻ
ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ,
ՀՀ ՔՀԾ 2-ՐԴ ԴԱՍԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԾԱՌԱՅՈՂ՝ Կ. ԼԱԼԱՅԱՆ

ԹԻՎ 28 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆ